



ՏԻՏՐՈՍԱԹԵՐԹ

**Յետազոտական
աշխատանք**

<p>Կազմակերպության տվյալներ</p> <ul style="list-style-type: none">• Անվանում, հասցե• Տնօրեն• Էլ.հասցե• Հեռախոս	<p>«Մասնակցային ղապրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908</p>
<p>Յետազոտության թեմա/վերնագիր</p> <ul style="list-style-type: none">• Յետազոտության թեմա	<p>Գրական լեզվի և բարբառների կիրառման դերը գրականության դասերին միջին ղապրոցում</p>
<p>Ուսուցչի տվյալներ</p> <ul style="list-style-type: none">• Անուն, ազգանուն, հայրանուն• Մասնագիտություն• Հեռախոս• Էլ. հասցե• Դասավանդվող առարկաներ• Դասարաններ	<p>Այվազյան Լուսինե Սմբատի Հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի 093-90-45-74 Loucinelu22@gmail.com Հայոց լեզու, Գրականություն, Մայրենի լեզու V- XII դասարաններ</p>

**Ուսումնական
հաստատության տվյալներ**

- Անվանումը, հասցե
- Հեռախոս
- Էլ. հասցե
(տնօրենության
)
- Web կայքի հասցե

Վարդաշենի միջակարգ
դպրոց Միեր Մկրտչյան
11
093-19-0876
vardashen@school.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿ ԱՆՆԱՏԱ
ԱՆ-----ՆՔ----- 1

ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ
-----1

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3

ՆԵՐԱՃՈՒԹՅՈՒՆ
-----3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ
-----6

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԵԹՈԴՆԵՐ

--4

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
-----15

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
-----16

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՆԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

<p>Նպատակը եւ հետազոտական հարցը</p>	<p>Ջայտնի փաստ է ,որ լեզուն և գրականությունը փոխկապակցված գիտակարգեր են:</p> <p>Ընտրված թեման հավասարապես վերաբերում է և՛ լեզվաբանությանը և՛ գրականությանը, մեր դեպքում՝ նաև մանկավարժական մեթոդաբանությանը:</p> <p>Մասնավորապես՝ գրականության դասերին կարևոր է, որ աշակերտները ծանոթանան գրական երկի, ստեղծագործության ստեղծման պատմությանը, ոճական առանձնահատուկություններին և լեզվին:</p> <p>Մեր նպատակն է միջին դպրոցի աշակերտների շրջանում գործածական դարձնել գրական լեզվի և բարբառների ուսումնասիրումը, ինչը կնպաստի գրական լեզվի և բարբառների հնարավոր կիրառությունների բացահայտմանը՝ բազմապատկելով գրական հայերենի հնարավորությունները:</p> <p>Մենք անդրադառնալու ենք միջին դպրոցում գրականության դասերին գրական լեզվի և բարբառների կիրառման դերի կարևորությանը:</p> <p>Մեր հետազոտության հիմանական նպատակն է ուսումնասիրել բարբառների դերը գրական ոճավորման մեջ, դրա ուսումնասիրությունը դպրոցում և ուսուցման մեթոդաբանությունը:</p> <p>ՀԱՐՑ – Ինչ դեր ունի գրական լեզվի և բարբառների կիրառումը գրականության դասերին միջին դպրոցում Վարդաբեկի միջնակարգ դպրոցի օրինակով:</p>
--	---

Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարող ունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը

Նպատակի ուսումնասիրությունը ուղղված է հետևյալ կոմպետենցիաներին.

- Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- Սովորել սովորելու կարողունակություն
- Մշակութային կարողունակություն

Չետագոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Վարդաշենի միջնակարգ դպրոցի 5-րդ ^ա դասարանի 21 աշակերտ ` 11 տղա, 10 աղջիկ VI ^ա 21 աշակերտ ` 10 տղա, 9 աղջիկ
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Չետագոտությունը կատարվել է որակական մեթոդներ, գրականագիտության, լեզվաբանության, մանկավարժության տեսական հիմքերով՝ համեմատության և վերլուծության մեթոդներով: Համեմատության մեթոդի նպատակն է ուշադրություն դարձնել երկու կամ ավելի օբյեկտներին՝ նրանց հարաբերությունները բացահայտելու, նմանությունները հաշվի առնելու համար : Վերլուծական մեթոդն էլ այս պարագայում դառնում է ճանաչողության մի հնար, տարբերակ: Այս մեթոդը ուսումնասիրության մի ձև է, որը ներառում է այնպիսի հմտություններ, ինչպիսիք են քննադատական մտածողությունը և տեղեկատվության գնահատումը: Մեթոդի հիմնական գաղափարը հետազոտվող նյութի մասին տեղեկատվություն գտնելն է: Ինտերակտիվ այս մեթոդների նպատակն է հետազոտության ընթացքում աշակերտների ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերումը:
Չետագոտության իրականացման ժամանակահատվածը	25.08 .2023- 20.09.2023

ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գրականության ակնարկ

- Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից,
- Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից:

Պարտադիր է կատարել հղում աղբյուրին

Հայոց լեզուն պատմական հանգամանքների բերումով տարածքային բազում տարբերակներ է ունեցել: Իրարից առանձնացված լինելով կենցաղով, ազդեցություններով և բարբերով՝ մեր բարբառները դրսևորել են բազմաթիվ տարբերություններ, իսկ ընդհանրությունները ինքնին հասկանալի են որպես միևնույն լեզվի տարբերակ: «Բարբառը համաժողովրդական լեզվի այն տարատեսակն է, որ խոսվում է սահմանափակ տարածքում և ունի յորահատեկ հնչյունական կազմ, բառապաշար, քերականություն: Բարբառների առաջացման հիմնական պատճառը տվյալ լեզվով խոսող հանրության տարբեր հատվածների տարածքային, վարչաքաղաքական և տնտեսական տարանջատվածությունն է, նպաստող հանգամանք է նաև տվյալ երկրի աշխարհագրական մասնատվածությունը, այսինքն՝ բարձր լեռներով, մեծ գետերով կտրտված լինելը:

(**Յ. Չաքարյան, Յու Ավետիսյան, Ոճագիտության տեքստագիտություն, Հայոց լեզվի պատմություն, Եր. 2018, էջ 165:**)

Հայ բարբառագիտությունը երկարատև զարգացման ուղի է անցել: Դրա սաղմերը տեսանելի են անգամ հին հայերենյան շրջանի ու միջնադարյան մեկնիչների քերականություններում: Օրինակ՝ 8-րդ դարի պատմիչ Ստեփանոս Սյունեցին իր ժամանակի համար վկայել է մեկ կենտրոնական և յուրեք եզրային բարբառ՝ Չորրորդ Հայքի, Տայքի Կորճայքի, Խուրթի, Սպերի, Սյունիքի և Արցախի: Պատմական Հայաստանի տարբեր հատվածների վարչական ու տնտեսական տարանջատվածությունը մեծացավ հատկապես 13-19-րդ դարերում: Այդ ժամանակ էլ սկսեցին խորանալ հայերենի տարածքային տարբերակումները՝ բարբառները և

	խոսվածքները: Բարբառներ գոյացան նաև որոշ սփյուռքահայ գաղթավայրերում: (Նույն տեղում , էջ 165) Բայց հայերենի բարբառների բուն
--	--

Ջեռագոտության ընթացքը

ուսումնասիրությունն սկսվել է 19- րդ դարի վերջերից:Առաջին հայ բարբառագետներն են Ա. Այտնյանը,Զ. Պատկայնանը,Լ. Մարյանցը, Գ Ախվերդյանը և այլք:Նրանց կատարած ուսումնասիրությունները հայ բարբառագիտության զարգացման գործում արժեքավոր են, և արտացոլում են հայերենի այս կամ այն բարբառի հնչյունական, քերականական կառուցվածքի նկարագիրը(Գիտական բարբառագիտության 100 -ամյակի գիտաժողովի նյութեր,Երևան 2017 ,էջ 5-6): Իհարկե բարբառագիտության ձևավորման գործում մեծագույն դերը պատկանում է Հրաչյա Աճառյանին:Նա տվեց բարբառագիտության ամբողջական ուղղապատկերը իր`<< Հայ բարբառագիտություն- ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (Երևան 1911) գրքում: Աճառյանի և մյուս բարբառագետների ուսումնասիրությունների արդյունքում ձևավորվել է արդեն դասագրքային դարձած մոտեցում ,ըստ որի ,հայ բարբառները բաժանվում են 4 ճյուղի` ում, կը, էլ, ս:Ճյուղերը զանազանվում են ըստ անկատար ներկայի ձևավորման: Ճյուղերն իրենց անունները ստացել են ըստ վերջավորությունների :

Հայերենի բարբառների թիվը վեճերի առիթ է տվել: Օրինակ` Չաքարյանը և Ավետիսյանը ընդունում են Ջահուկյանի 44 բարբառների դասակարգումը, իսկ 11-րդ դասարանի դասագրքի հեղինակները ընդունում են 60 թիվը:

Աշակերտներն,իհարկե, տեսական այս գիտելիքը ստանում են միայն ավագ դպրոցում` 11 -րդ դասարանի առաջին կիսամյակում, բայց բարբառբերին ծանոթացումը սկսվում է շատ ավելի վաղ`

	<p>հեքիաթներից: Բանահյուսական և արդի գրական հեքիաթի լեզվաոճական մի քանի առանձնահատկությունները հոդվածում Ն. Վարդանյանը իրավացիորեն նշում է (Յեքիաթները ժողովրդական մտածողության լավագույն դրսևորումներց են, ժողովրդական լեզվի բառ ու քանի մեծագույն ամփոփագրերը: ժողովրդական հեքիաթը, որը պատմվում է կոնկրետ որևէ բարբառագրի կողմից ,</p>
--	---

բանականաբար, ամբողջությամբ փոխանցում է տվյալ բարբառին հատուկ դրսևորումները՝ սկսած բառապաշարից և դրա հնչյունական յուրահատուկ դրսևորումներից, վերջացրած ձևաբանական և շարահյուսական միջոցներով): Միջինդպրոցում, օրինակ, հեքիաթների ուսուցումը սկսվում է ժողովրդական << Ոսկի արտ>>- ից: Իհարկե հեքիաթը դասագրքի հեղինակների կողմից որոշակի մշակման է ենթարկվել՝ երեխաներին հասկանալի լինելու նպատակով, բայց հերոսների խոսքում պահպանվել են բարբառային բառերն ու արտահայտությունները: Բացի այդ պահպանվել են ժողովրդական հեքիաթին բնորոշ ավանդական կայուն բանաձևերը, որոնք արտացոլում են ժողովրդական լեզվամտածողությունը: Ժողովրդական մտածողության լավագույն դրսևորումներից են օրինանքները և << Մայրենի 5 >> դասագրքի ստեղծողները ժողովրդական մտածողությանը ծանոթացնելու համար հատուկ հանձնարարություն են մտածել աշակերտների համար՝ առանձնացնել օրինանքները և ինքնուրույնաբար ավելացնել դրանք իրենց խոսքում: Մեր հետազոտության շրջանակում աշակերտների փոքր խմբին տրվել է հանձնարարություն դասարանում բանավոր կերպով հիշել օրինանքներ ու բարեմադթանքներ: Սա ուսուցչի համար հարմար առիթ է, ոչ միայն լեզվական նյութը բացատրելու, այլ նաև 5-րդ դասարանցիներին հասկանալի դարձնելու, թե ինչպես է բանահյուսական նյութը բանավոր կերպով սերնդեսերունդ փոխանցվում: Մեկ այլ դասարանում արված փորձը ցույց տվեց, որ 17 աշակերտներից 10-ը ի վիճակի է ոչ միայն օրինանքների բացատրությունը հասկանալու, այլ նաև ըստ իրավիճակի կարող է դրանք

	<p>խոսքում կիրառել:Երեխաներին ամենաձանոթ բարբառային օրինանքը եղել է << Կյանքդջրի նման երկար ըլնի>> արտահայտությունը:Երեխաների մեծամասնությունը հստակ տարբերում է ,որ << ըլնի>>- ն Արարատյան բարբառին բնորոշ բառաձև է,իսկ դրա գրական տարբերակը <<Լինի>>- ն է:</p>
--	--

Ընդհանրապես հեքիաթների համն ու հոտը պատրաստի խոսքերն են տալիս :Պատրաստի խոսքերը երկու մասի են բաժանվում՝ ժողովրդական և գրական:Ժողովրդական ծագում ունեն ժողովրդական բառ ու բանը՝ ասացվածքները,կարճաբանությունները,առած ները,խրատանին,համառոտ առակներն ու անեկդոտները:(Պողոսյան Պ. ,1990, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ,Գիրք առաջին, Եր.):

Ժողովրդական հեքիաթներից գատ՝ բարբառները կիրառվում են նաև բուն գրական գործերում :Դրանք ոճավորելու և հեղինակի խոսքը հարստացնելու հրաշալի միջոց են:Ինչպես նշում է մեծն Յոզի. Թումանյանը <<Ժողովրդական բարբառներից օգտվելը ոչ թե դատապարտելի է, այլ հենց դա է բնական ճանապարհը կայտառ ու կենդանի լեզու ստեղծելու>>:

7-րդ դասարանում աշակերտները ծանոթանում են Մ. Գալշոյանի << Մամփրե արքա>> պատմվածքի կրճատված տարբերակին: Մուշեղ Գալշոյանի պատմվածքի միջոցով ծանոթանում են հենց Սասունի բարբառին: Այս դեպքում գործ ունենք ոչ միայն աշակերտների լեզվական կարողություններին ուղղված պարզ վարժությունների հետ:

Սասունի բարբառի կիրառումը պատմվածքում ընկալելը աշակերտին թույլ է տալիս հասկանալու ամբողջ պատմական կոնտեքստը,որն առկա է տվյալ պատմվածքում,մասնավորապես Սասունի բարբառը անմիջական հղում է Արևմտյան Հայաստանին:Մամփրե արքան որպես գլխավոր կերպար ցեղասպանությունը վերապրողներից է: Նա այնտեղից է վերցրել ոչ միայն իր վարքերն ու բարքերը, այլ նաև իր լեզուն,որ իր ինքնությունն է, բացի այդ Սասունի բարբառն օգտագործելը սիմվոլիկ է

Նրանով, որ այն մեր էպոսի լեզուն
է: Պատահական չէ, որ Հրանտ Մաթևոսյանը
<<- Ուրիշ ո՞ւմ եք համարում բառերի
հրավառության հեղինակ>>
հարցին պատասխանում է.
<<- Մուշեղն էր եղպիսին՝ Մուշեղ Գալշոյանը:
Իր գաղտնիքն էր բառը: Նույն բառը ուրիշների
տեքստերը չի փրկում: Չէ, չի փրկում:
Այն

ժամանակ Մուշեղին ասացի. «Ինչ մեծ ու գեղեցիկ շտեմարան ունես»: Սասնո բարբառը, Էպոսը համաժողովրդական սիմվոլիկա է, գանձարան: Այ այդպես կարդում ես Մուշեղին՝ ոնց որ գանձարան մտած լինես: Բայց տես, որ ուրիշների համար դա չկա: Ահա, մեծերն են իրենց օրենքներն ստեղծում...>> (<https://hrantmatevossian.org/hy/aboutothers>)

Բարբառի առկայության շեշտադրումը հնարավորություն է տալիս հղում կարարել նաև Գալշոյանի կենսագրությանը: Փոխկապակցվածությունը էլ ավելի է ամրապնդում աշակերտի գիտելիքը: Այս դեպքում <<Մամփրե արքա>> - ի համանուն հերոսի բարբառակիր լինելը աշակերտին ևս մեկ անգամ հիշեցնում է, որ Գալշոյանը գաղթել է Սասունից: Սա նաև օգնում է հասկանալ, որ Սասունի բարբառը սերտաճած է Գալշոյանի մտածողությանը: Ինչպես նշվում է գիտական գրականության մեջ Բարբառը կամ խոսվածքը լեզվական այն տարբերակն է <<որին մարդը տիրապետում է վաղ մանկությունից, և բարբառով է նրա գիտակցության մեջ ձևավորված քերականական տրամաբանությունը>>: (Բայազետի բարբառը և նրա լեզվական առաձևահատկությունները շրջակա բարբառների հետ, Վ. Կատվալյան, Եր., 2016) Գրողի կողմից՝ ժողովրդի բնավորության, մտածելակերպի, կենսափիլիսոփայության գեղարվեստական արտացոլման եղանակներից մեկը բարբառային ու ժողովրդախոսակցական իրողությունների գործածությունն է: Բարբառային բառերը գեղարվեստական գրականություն կարող են մուտք գործել ակամա՝ լեզվամտածողության թելադրանքով, և

	<p>կանխամտածված՝ գեղարվեստական երկի ոճավորման նպատակով: (Նույն տեղում, էջ 16) Վերոնշյալ տեքստում երկու վարկածն էլ հնարավոր է դիտարկել, քանի որ կորսված հայրենիքի բարբառը Գալշոյանը հատուկ կերպով օգտագործել է պատմվածքում՝ ընդգծելով հատկապես որդուն և թշնամուն տրվող դիմելաձևերը, մասնավորապես թոռանը տրվող «գառ» դիմելաձևը, ըստ երևույթին, գրական հայերենով հնարավոր չէր լինի</p>
--	---

փոխարինել: Բարբառային այս ձևը, մեր կարծոքով, ամբողջապես արտահայտում է հերոսի քնքշանքն ու սերը թոռան հանդեպ: Իսկ Օսմանին գրված նամակը հակառակ գործառույթն ունի. բարբառային լեզվով հաղորդվում է թշնամու նկատմամբ ողջ զայրույթը: պատմվածքում մյուս կարևոր դրվագը, որ անմիջականորեն առնչվում է տեքստի բովանդակությանը և միաժամանակ հղում է կատարում պատմական կոնտեքստին՝ Միրե աղբյուր բարբառային տեղանվան ստուգաբանությունն է:

Ուսուցչական մեր փորձը ցույց է տվել, որ առանց նախապատրաստելու աշակերտը չի կարող ընկալել ոչ այս բարբառը ուղղակիորեն, ոչ էլ գրողի մտահղացումը:

Գեղարվեստական գրականության մեջ գրական լեզուն և բարբառային միավորները տարբեր գործառույթներ ունեն, այս պարագայում ստեղծագործության միջոցով աշակերտները ծանոթանում, հաղորդակից են դառնում սյուժեի նկարագրության մեջ տվյալ ժամանակաշրջանի, տարածաշրջանի կենցաղին, բարբառին, մշակույթին, արվեստին, դարձնելով այն ճանաչելի՝ ընդլայնելով

ընթերցողի պատկերացումը տվյալ բարբառի առանձնահատկությունների մասին, և ստեղծելով համապատասխան բներանգ՝ գրական կերպարները դարձնելով ավելի գործուն, իսկ կերպավորումը՝ համոզիչ: (Վ. Կատվալյան, Նշված գիրքը, էջ 20)

Նշված միտքը կիրառելի է նաև Գ . Սունդուկյանի «Պեպո»

պիեսի վերաբերյալ: Աշակերտը մինչև «Պեպոն» ծանոթ է Սայաթ-Նովայի անվանը և որոշակի պատկերացում ունի այն մասին, որ թիֆլիսահայերը ունեին նաև իրենց բարբառը: Այս դեպքում բարբառը նպատակ ունի սոցիալական միջավայրի ամբողջ պատկերը տալ: Ի. Տրավսկին «Պեպո» ֆիլմի և ներկայացման գրախոսության մեջ ընդգծում է

	<p>,որ թիֆլիսահայ ժողովրդական բարբառը <<Բեմական տեքստին հաղորդել է առանձնահատուկ հյութեղություն և կենսունակություն>>: Իհարկե թիֆլիսահայ բարբառը շատ ավելի տարանջատված է գրակա</p>
--	---

լեզվից,և աշակերտները երբեմն տեքստը կարդում և չեն հասկանում,անշուշտ, աշակերտներին օգնության է գալիս կցված բառարանը, բայց առանց ուսուցչի օգնության << Պեպո>> -ի լեզուն հասկանալը ,թերևս,երթ ոչ անհնար,ապա առնվազն շատ դժվար կլինի:Կարող ենք,որ <<Պեպո>>-ն աշակերտներին մատուցվի գրական մշակված տարբերակով,բայց այս դեպքում մեծ վտանգ կա ,որ այն ամբողջապես կարող է կորցնել իր ոճը և «քաղցրությունը»:Մյուս կողմից թիֆլիսահայ բարբառի որոշ տարրերի ուսուցումը խիստ անհրաժեշտ է դառնում գրականության դասերին ,քանի որ հայտնի փաստ է ` թիֆլիսը 18-19 – րդ դարերի մշակութային կենտրոնն էր ,և շատ գրողներ են թիֆլիսի բարբառը օգտագործել :Մոտավորապես գոնե պատկերացնելով բարբառային մի քանի օրիաչափություններ աշակերտը նաև արտադպրոցական գրականության հսկայական նյութի կարող է հասանելի դարձնել:

Ընդհանրապես, չնայած նրան ,որ ժամանակակից մանկավարժությունը միտված է աշակերտների ծանրաբեռնվածությունը թթփելուն, բայց բարբառների նկատմամբ ուշադրությունը ,ըստ մեզ, պետք է շարունակական լինի, և մաս առ մաս հասանելի լինի դպրոցական ծրագրում, թեկուզ դա լինի նախագծային ուսուցման կամ արտադպրոցական միջոցառումների շրջանակում,ինչպես օրինակ ԿԳՄՍ

Նախարարության`<<Բարբառը մեր հարստությունն է >> մրցույթն էր:Այս ծրագրին մասնակցել է 450 դպրոց:Սրա նպատակը թերևս օրեցօր աճող վտանգն է` բարբառները կորցնելու:Դրան հակառակ` բարբառագիտությունը զարգացող

գիտությունն է: Այդ մասին վկայում է նաև այն,
որ մինչև այսօր տեղի են ունենում
բարբառագիտությանը նվիրված
գիտաժողովներ և
քննարկումներ:Պատճառը, ըստ էության,
հականալի է. բարբառները օրեցօր հայտնվում
են վտանգի եզրին, և դրա պահպանումը
դառնում է մշակութային անվտանգության
խնդիր: Պարզ
օրինակ բերենք. 44 - օրյա պատերազմից հետո
Արցախի ժողովրդի մի մասը իր բնակավայրից

	<p>դուրս եկավ,և տարիներ հետո,եթե ոչ ամբողջական բարբառ (խոսքը Յադրութի բարբառի մասին է),ապա առնվազն խոսվածքը ձուլվելու է կամ գրական լեզվին,կամ այլ բարբառի և կորցնելու է իր տեսակը:Մեր խնդիրն է սկսած դպրոցական նստարանից կարևորել բարբառների գոյությունը ,անհրաժեշտության դեպքում ձևավորել միջավայր ,որտեղ բարբառախոս երեխային չեն ծաղրի բարբառակիր լինելու համար, իսկ գրականության դասընթացում հերոսների բարբառային խոսքը կընկալվի որպես լեզվական հարստություն:</p>
	<p>Աշխատանքն ընթացել է՝ հաշվի առնելով միջին դպրոցի ուսուցման գործընթացում գրական լեզվի ու բարբառների դերը և կարևորությունը: Դրանք միմյանցից անբաժան են, ուստի հարկ է նշել, որ պետք է նրանց ուսումնասիրությունը և կիրառումը մեծ ուշադրության արժանանանա: Հետազոտությունն իրականացվել է երեք փուլով:Առաջին փուլը կազմակերպվել է դասարանում,դասապրոցեսի ընթացքում՝ ամբողջ դասարանի մասնակցությամբ: 5-րդ դասարանի աշակերտները դասագրքի << Լինում է, չի լինում >> բաժնի հեքիաթներից դուրս են գրել բարբառային բառերը, այնուհետև հանձնարարվել է գրել բարբառային բառերի գրական համարժեքները:Աշակերտներն իրենց դասագրքի ծրագրային ուսուցման շրջանակներում հանձնարարված նյութից դուրս գրված բարբառային տարբերակներով փորձել են փոքրիկ տեքստ կազմել և ներկայացնել:</p> <p>Երկրորդ փուլում աշակերտները բարբառների մասին գիտելիքը յուրացրել են փոխներգործուն ուսուցման մեթոդով. յուրաքանչյուրը, պետք է հայկական ժողովրդական հեքիաթներից մեկն ընտրելով, կարողանար ինքնուրույն</p>

	տարբերակել և դուրս գրել բարբառային և տարբեր խոսվածքներին բնորոշ բառերը և դրանք ներկայացնել գրական
--	---

	<p>տարբերակներով:Սրան գուզահեռ դասարանում աշակերտները հարց ու պատասխանի միջոցով փորձել են մեկը մյուսին սովորեցնել իրենց դուրս գրած բառերը,այդպես իրականացնելով գիտելիքի փոխանակում:</p> <p>Այս աշխատանքը միտված է եղել աշակերտների ինքնուրույն որևէ բան ձեռնարկելու, այն իրականացնելու,ավարտին հասցնելու կարողունակության զարգացմանը: Համագործակցային ուսուցման հմնական գաղափարը ոչ այնքան միասին սովորելն է , որքան միասին ինչ-որ բան կատարելը:Աշակերտներից յուրաքանչյուրը, մասնակցություն ունենալով ուսուցման ընթացքին,ձեռք է բերում մի շարք հմտություններ,որոնք համագործակցային ուսուցման առանցքային կետերից են`</p> <ul style="list-style-type: none"> • Անձի զարգացումը և անհատականության ձևավորումը • Հոգեբանական և ֆիզիկական առողջության պահպանումը • Շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը • Անհատական հաշվետվություն և պատասխանատվության զգացում: <p>Երրորդ փուլում աշակերտները անհատական աշխատանք պետք է կատարեն ` պատրաստելով բառարան- գրքույկներ ,որոնց մեջ պետք է տեղ գտնեն այն բարբառային բառերը,որոնք նրանք լսում էին իրենց ընտանիքի անդամներից, առօրյայում միմյանց հետ հաղորդակցվելիս, կամ պարզապես հարցման միջոցով ,պետք է հավաքեն իրենց տարածաշրջանին բնորոշ խոսվածքի մաս կազմող բառեր և գրեին դրանց գրական հայերեն համարժեքները:</p> <p>Ինտերակտիվ մեթոդներով իրականացված այս հետազոտությունը`</p>
--	--

	<p>աշակերտների մասնակցությամբ, թույլ է տալիս հանգել մի եզրակացության, որ՝</p> <ul style="list-style-type: none">• Բոլոր մասնակիցները հավասար են• Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի իր կարծիքը հայտնել ցանկացած հարցի
--	--

վերաբերյալ

- Աշխատանքում պետք է ներգրավված լինեն բոլոր աշակերտները
- Ոչ մի աշակերտ չպետք է քննադատվի

Հետազոտությանը մասնակցել են 5-րդ դասարանի 21

աշակերտ,ամբողջությամբ հասկացել են աշխատանքը կատարել է 9 աշակերտ տվյալ ժամանակամիջոցում, 3 աշակերտ լրացուցիչ ժամանակամիջոցում, 5 աշակերտ հասկացել է առաջադրանք, բայց կատարել է մասնակի:Մնացյալ աշակերտները հասկացել են միայն տեսական մասը ,գործնական աշխատանքը չեն կարողացել կատարել:

VI դասարանում հանձնարարվել է բարբառային տեքստի վերարտադրում՝ համապատասխան բարբառի հնչյունական, քերականական և բառային փոխադրությամբ:Աշխատանքը տրվել է որպես լրացուցիչ առաջադրանք: Կարողացել են կատարել

միայն երեք աշակերտ:Աշակերտները

,որոնք կատարել էին առաջադրաքը ,կամ բարբառակիր են,կամ առնվազն ծնողներից մեկը բարբառակիր է:

Վերլուծությունը ցույց է տալիս ,որ աշակերտները ի վիճակի են առանձին բարբառային բառեր ճանաչելու և նախադասության մեջ օգտագործելու,կարող են գտնել որոշ բարբառային բառերի գրական տարբերակները,հեշտորեն տարբերակում են գրական լեզվի բառերը բարբառային բառերից, բայց առանց համապատասխան միջավայրի չեն կարող խոսել բարբառով:Թերևս գրականության դասերին պատրաստվելու համար բարբառային բառերով տարվող առաջադրանքների քանակը լիովին

	<p>բավարարում է և անհրաժեշտություն չկա բարբառակիր լինելու տեքստը հասկանալու համար:</p> <p>Ստեղծարարության մեջ միջին դպրոցում տրվող գիտելիքները բավարար չեն կարող համարվել:</p>
--	--

**Վերհանված
արդյունքներ,
եզրակացություններ,
պատասխան
հետազոտական հարցին**

Այսպիսով ամփոփելով մեր տեսական և գործնական ուսումնասիրությունները ,կարող ենք փաստել,որ բարբառները գրականության մեջ ունեն հետևյալ դերերը.

- Ընդհանուր տեքստի ոճավորման ,լեզվի հարստացման միջոց
- Բարբառային բառերը սոցիալական միջավայրի ցուցիչ են ծանոթ լինելով տեքստի բարբառային առանձին բառերին՝ աշակերտները կարող են պատկերացում կազմել տվյալ երկուսնկարագրվող տարածության միջավայրին,կենցաղին ու բարքերի որոշ առանձնահատկություններին
- Գիտափորձը ցույց տվեց,որ միջին դպրոցի աշակերտները մեծամասամբ ի վիճակի են ինքնուրույնաբար գտնելու բարբառային բառերը ,հստակ տարբերելու դրանք գրական բառերից,բայց դժվարություններ ունեն բարբառային բառերը գործածելու ընթացքում
- Գրականության դասընթացում բարբառային բառերի գործածումը կարող է կապված լինել երկու գործոնից
 1. տեքստային միջավայր
 2. Գրողի կենսագրություն

Այսպիսով՝ կարծում ենք,որ բարբառագիտության մասին որոշ տեսական գիտելիքների և բարբառային առանձին բառերի հետ աշխատանքը միջին դպրոցում կարող է բանալի դառնալ գրականության նյութի ավելի խորը ընկալման:

Սա հաշվի առնելով առաջարկում ենք ,որ գրականության և լեզվի նախագծային աշխատանքներում ընդգրկվեն նաև բարբառագիտությանը վերաբերող ծրագրեր,քանի որ սա թույլ կտա աշակերտներին բառապաշարը հարստացնել և

ավելի լավ հասկանալ գյուղական կամ
թիֆլիսահայ գրականությունը

ՕԳՏԱԳՈՐԾԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Յ. Չաքարյան ,Յու Ավետիսյան « Ոճագիտության տեքստաբանություն, հայոց լեզվի պատմություն»,Եր. ,2018

« Գիտական բարբառագիտության 100 ամյակի գիտաժողովի նյութեր »,Եր. ,2017

Պ. Պողոսյան « Խոսքի մշակույթի հիմունքներ,Գիրք առաջին » ,Եր. ,1990

Վ. Կատվալյան « Բայազետի բարբառը և նրա լեզվական առանձնահատկությունները շրջակա բարբառների հետ»,Եր. , 2016

<https://hrantmatevossian.org/hy/aboutothers>

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ



